

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Թ Ի Վ 11
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒՆՏՐՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

2020 թվականի մարտի 12-ին, ժամը 14⁰⁰-ին տեղի ունեցավ Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի Գիտական խորհրդի նիստ:

Նիստը նախագահում էր ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար, պրոֆեսոր Դավիթ Խիթարյանը:

Գիտական խորհրդի 34 անդամներից նիստին մասնակցում էին 28-ը՝

1. Դ. Խիթարյան, 2. Գ. Սարգսյան, 3. Ա. Նուշիկյան, 4. Վ. Գևորգյան, 5. Ա. Չատինյան, 6. Լ. Ստեփանյան, 7. Տ. Սիմոնյան, 8. Ռ. Մարտյան, 9. Օ. Պետրոսյան, 10. Գ. Մուրադյան, 11. Ա. Հակոբյան, 12. Հ. Բաբայան, 13. Խ. Հարությունյան, 14. Յու. Գրիգորյան, 15. Ա. Դանիելյան, 16. Ս. Դանիելյան, 17. Ա. Հարությունյան, 18. Մ. Ասատրյան, 19. Ս. Հովեյան, 20. Է. Մարտիրոսյան, 21. Հ. Մելքոնյան, 22. Գ. Նալբանդյան, 23. Ա. Բարսեղյան, 24. Ն. Սելումյան, 25. Ա. Բաղդասարյան, 26. Դ. Սարգսյան, 27. Լ. Մկրտչյան, 28. Մ. Աղաբաբյան:

(Գիտական խորհրդի նիստի մասնակիցների գրանցացուցակը կցվում է):

Հարգելի պատճառով նիստից բացակայում էին՝ Ա. Ստեփանյանը, Ա. Բաղալյանը, Ս. Սիմոնյանը, Ս. Առուշանյանը, Վ. Վիրաբյանը, Ա. Ավետիսյանը:

Մինչ օրակարգին անցնելը՝ ինստիտուտի ռեկտորի պաշտոնակատար Դավիթ Խիթարյանը շնորհավորեց բուհի աշխատակից Ռաֆիկ Հովհաննիսյանին ծննդյան 70-ամյակի առթիվ՝ հանձնելով «Շնորհավորագիր» և նվեր:

Պրոֆեսոր Դ. Խիթարյանը Գիտական խորհրդի անդամներին տեղեկացրեց Արհմիության գործունեության ձևաչափի փոփոխման մասին: Ռեկտորի ԺՊ-ն նշեց նաև, որ Գիտական խորհրդի կազմում տեղի կունենա փոփոխություն՝ Արհմիության

նախագահ Ա. Անդիկյանին կփոխարինի Գիտության գծով պատասխանատու Ա. Հակոբյանը:

Գիտական խորհրդի նախագահ, պրոֆեսոր Խիթարյանն առաջարկեց հաստատել օրակարգը:

Գիտական խորհրդի անդամները միաձայն հաստատեցին Գիտական խորհրդի նիստի օրակարգը:

Օրակարգ՝

1.«ՍՊՈՐՏ ԿԱԲ» գիտահետազոտական կենտրոնի ղեկավարի փոփոխություն և նոր ղեկավարի նշանակում

(Ձեկուցող՝ ռեկտորի պաշտոնակատար Դ. Խիթարյան)

2.«Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի 2019-2020 ուսումնական տարվա աշխատանքային պլանի վերանայում

(Ձեկուցող՝ Ուսումնագիտական աշխատանքների գծով պրոռեկտոր Գ. Սարգսյան)

3.Հասարակել՝ «Զինակոչիկների հարմարման բժշկակենսաբանական գործոնների ուսումնասիրումն անձի անվտանգության ապահովման համատեքստում» թեմայով ծրագիրը՝ Գիտության պետական կոմիտե ներկայացնելու համար

(Ձեկուցող՝ ՖԴԱՏ ֆակուլտետի ղեկան Լ. Ստեփանյան)

4.Հասարակել՝

ա)«Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի դասալսումների կազմակերպման, անցկացման և գնահատման կանոնակարգը,

բ)ՀՖԿՍՊ-ի մասնագիտության կրթական ծրագրի արտաքին գնահատման ընթացակարգը

գ) «Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ», «Ադապտիվ ֆիզիկական կուլտուրա», «Առողջարարական ֆիզիկական կուլտուրա (կինեզոլոգիա)», «Ադապտիվ սպորտ», «Հոգեբանություն» մագիստրոսի կրթական ծրագրերը

(Զեկուցող՝ Որակի ապահովման բաժնի պետ Գ. Մուրադյան)

5. Այլ հարցեր

1. *Լսեցին՝* *ռեկտորի պաշտոնակատար Դ. Խիթարյանին: Նա ներկայացրեց* «ՍՊՈՐՏ ԿԱԲ» գիտահետազոտական կենտրոնի ղեկավարի փոփոխության և նոր ղեկավարի նշանակման հարցը: Պարոն Խիթարյանը նշեց, որ ԿԳՄՍ-ի նախարարության հետ քննարկվել է Սպորտային բժշկության կենտրոնը միացնել «ՍՊՈՐՏ ԿԱԲ» բժշկության կենտրոնին՝ ստեղծելով Սպորտային բժշկության գենետիկայի կենտրոն: Հետևաբար, այս առումով շատ կարևոր է, որ հետազոտական կենտրոնի ղեկավարը լինի բժշկական կրթությամբ մասնագետ: Ռեկտորն առաջարկեց Արփինե Մուրադյանի թեկնածությունը, նշելով, որ՝ վերջինս մեկ ամսվա ընթացքում պետք է կենտրոնի զարգացման նոր հայեցակարգ ներկայացնի, ինչը կքննարկվի և կհաստատվի Գիտական խորհրդի նիստում:

Քվեարկություն. կողմ՝ 28, դեմ, ձեռնպահ չկա:

Որոշեցին՝ «ՍՊՈՐՏ ԿԱԲ» գիտահետազոտական կենտրոնի ղեկավար նշանակել Արփինե Մուրադյանին:

2. *Լսեցին՝* *Ուսումնագիտական աշխատանքների գծով պրոռեկտոր Գ.Սարգսյանին: Նա առաջարկեց վերանայել* «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի 2019-2020 ուսումնական տարվա աշխատանքային պլանը և մեկ շաբաթվա ընթացքում ներկայացնել առաջարկություններ՝ ինստիտուտի 2020 թվականի ապրիլ-հուլիս ժամանակահատվածի ուսումնական գործունեության վերաբերյալ, որոնք քննարկելուց հետո կհաստատվեն Գիտական խորհրդի նիստում:

Քվեարկություն. կողմ՝ 28, դեմ, ձեռնպահ չկա:

Որոշեցին՝ վերանայել «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի 2019-2020 ուսումնական տարվա աշխատանքային պլանը:

3. Luteghin՝ Ֆիզիկական դաստիարակության և առողջարարական տեխնոլոգիաների ֆակուլտետի դեկան, կ.գ.թ., դոցենտ Լ. Սյրեփանյանին: Նա ներկայացրեց «Զինակոչիկների հարմարման բժշկակենսաբանական գործոնների ուսումնասիրումն անձի անվտանգության ապահովման համատեքստում» թեմայով ծրագրի նախագիծը:

(Ծրագրի նախագիծը կցվում է):

Ելույթ ունեցան՝ պրոֆեսորներ Հ. Մելքոնյանը, Հ. Բաբայանը, դոցենտ Ա. Հակոբյանը: Նրանք հավանություն տվեցին կատարած աշխատանքներին և առաջարկեցին երաշխավորել ծրագիրը Գիտության պետական կոմիտե ներկայացնելու համար:

Քվեարկություն. կողմ՝ 28, դեմ, ձեռնպահ չկա:

Որոշեցին՝ երաշխավորել «Զինակոչիկների հարմարման բժշկակենսաբանական գործոնների ուսումնասիրումն անձի անվտանգության ապահովման համատեքստում» թեմայով ծրագրի նախագիծը՝ Գիտության կոմիտե ներկայացնելու համար:

4. Luteghin՝ Որակի ապահովման բաժնի պետ Գ. Մուրադյանին: Նա հաստատման ներկայացրեց.

ա) «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի դասալսումների կազմակերպման, անցկացման և գնահատման կանոնակարգը,

բ) ՀՖԿՍՊ-ի մասնագիտության կրթական ծրագրի արտաքին գնահատման ընթացակարգը

գ)«Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ», «Ադապտիվ ֆիզիկական կուլտուրա», «Առողջարարական ֆիզիկական կուլտուրա (կինեզոլոգիա)», «Ադապտիվ սպորտ», «Հոգեբանություն» մագիստրոսի կրթական ծրագրերը:

Ելույթ ունեցան՝ Գ. Սարգսյանը, Օ. Պետրոսյանը, որոնք ներկայացրեցին «ՀՖԿՍՊ-ի մասնագիտության կրթական ծրագրի արտաքին գնահատման ընթացակարգի» որոշ դրույթների վերաբերյալ իրենց տեսլականը:

Քվեարկություն. կողմ՝ 28, դեմ, ձեռնպահ չկա:

Որոշեցին՝ հաստատել՝ փոփոխված տարբերակով.

ա)«Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի դասալսումների կազմակերպման, անցկացման և գնահատման կանոնակարգը,

բ)ՀՖԿՍՊ-ի մասնագիտության կրթական ծրագրի արտաքին գնահատման ընթացակարգը

գ)«Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ», «Ադապտիվ ֆիզիկական կուլտուրա», «Առողջարարական ֆիզիկական կուլտուրա (կինեզոլոգիա)», «Ադապտիվ սպորտ», «Հոգեբանություն» մագիստրոսի կրթական ծրագրերը:

ա)«Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի դասալսումների կազմակերպման, անցկացման և գնահատման կանոնակարգը,

բ)ՀՖԿՍՊ-ի մասնագիտության կրթական ծրագրի արտաքին գնահատման ընթացակարգը

գ)«Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ», «Ադապտիվ ֆիզիկական կուլտուրա», «Առողջարարական ֆիզիկական կուլտուրա (կինեզոլոգիա)», «Ադապտիվ սպորտ», «Հոգեբանություն» մագիստրոսի կրթական ծրագրերը:

5. Այլ հարցեր՝ 0. Պետրոսյանը ներկայացրեց բակալավրիատի և մագիստրոսական մասնագիտական կրթությունների վերաբերյալ ուսանողների մտահոգությունները: Նա նշեց, թեև օրենքը թույլ է տալիս, որ բակալավրիատի բազային և մագիստրատոսական կրթությունները տարբերվեն, այնուամենայնիվ, ուսանողներն աշխատաշուկայում բարդություններ են ունենում: Մեր խնդիրն է՝ հարցը քննարկել և դիմել ԿԳՄՍ-ի նախարարությանը՝ ոլորտը կարգավորելու համար:

Ելույթ ունեցան՝ Դ. Խիթարյանը, Հ. Մելքոնյանը, Ա. Նուշիկյանը, Գ. Նալբանդյանը, որոնք ներկայացրեցին իրենց դիտարկումներն ու տեսակետները՝ վերոհիշյալ խնդրի վերաբերյալ:

Դ. Խիթարյանը ներկայացրեց, որ ինստիտուտի կարևորագույն խնդիրներից են՝ ուսանողների հաճախումների հարցը, ներքին կարգուկանոնը, ինչպես նաև առարկայական ծրագրերը: Վերջին հարցով հանձնարարել է Ուսումնագիտական գծով պրոռեկտորին, ֆակուլտետների դեկաններին շատ սեղմ ժամկետներում ներկայացնել փոփոխված առարկայական ծրագրեր, որտեղ կգերակայեն մասնագիտական առարկաները: Առաջնային խնդիր է նաև 1-4-րդ կուրսերում օտար լեզվի իմացությունը:

Ռեկտորի պաշտոնակատարը ներկայացրեց նաև արտերկրի պարբերականներում գիտական հոդվածներ տպագրելու ձևաչափը:

Գիտական խորհրդի նախագահը նշեց՝ երկրում ստեղծված իրավիճակից ելնելով՝ ինստիտուտի որոշ միջոցառումներ հետաձգվում են:

Արձանագրությունը կազմեց Ե. Սիմոնյանը:

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ, ՊՐՈՖԵՍՈՐ՝

Դ. ԽԻԹԱՐՅԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

Ա. ՉԱՏԻՆՅԱՆ